ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի 2015թ. փետրվարի 27 նիստի

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) նիստը գումարվեց 2015թ. փետրվարի 27-ին՝ ժամը 14.30-ին ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: Նիստը վարում էր Հանձնաժողովի տարիքով ավագ անդամ, ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ **ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ**:

Մասնակցում էին՝

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար,

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահ,

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ.

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԸ՝ Արդարադատության ակադեմիայի ռեկտոր,

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆԸ՝ Մարդու իրավունքների պաշտպան,

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԸ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահ,

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԸ՝ «Հայաստանի Հանրապետության դատավորների միություն» հասարակական կազմակերպության նախագահ:

Հանձնաժողովի նիստն արձանագրում էր Հանձնաժողովի աշխատակազմի ներկայացուցիչ **Միքայել Մինասյանը**:

Գ. Հարությունյանը Հանձնաժողովի հաստատմանը ներկայացրեց նիստի օրակարգային հետևյալ հարցերը.

1. Հարցազրույցի արդյունքների ամփոփման հարցը:

2. Մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը հաստատելու հարցը:

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ 1-ԻՆ ՀԱՐՑ

1. Անհատական գնահատման արդյունքներն ամփոփելուց առաջ մրցույթի հարցազրույցի փուլին ներգրավված անգլերեն և ֆրանսերեն լեզուների մասնագետները ներկայացրել են իրենց եզրակացությունները՝ յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ:

Մասնագետների հեռանալուց հետո Հանձնաժողովի անդամները՝ Հանձնաժողովի 01.09.2014թ. թիվ 3-Լ որոշման IV-րդ գլխի կանոններին համապատասխան գնահատել են հարցազրույցի յուրաքանչյուր մասնակցի, որից հետո կազմակերպվել է գնահատման ենթակա յուրաքանչյուր չափանիշով հարցազրույցի յուրաքանչյուր մասնակցի միասնական միավորների հաշվարկումը և գնահատման թերթիկի կազմումը: Գնահատման թերթիկների վերաբերյալ կազմվել են առանձին արձանագրություններ:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2014 թվականի օգոստոսի 2-ի ՆՀ-199-Ն հրամանագրով հաստատված «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգի» 5-րդ կետով,

Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

- **Արձանագրել հարցազրույցի ամփոփման հետևյալ արդյունքները՝**

1) **Ստեփան Կարոյի Միքայելյան - 73,79 միավոր,**
2) **Արմեն Շուրայի Հարությունյան - 91,67 միավոր,**
3) **Ելիզավետա Ռեմիկի Դանիելյան - 66,78 միավոր,**
4) **Աստղիկ Ֆրունզեի Խառատյան - 52,29 միավոր,**
5) **Արայիկ Գառնիկի Ղազարյան - 88,86 միավոր,**
6) **Նելիկ Նիկողոսի Հարությունյան - 46,04 միավոր,**
7) **Վիգեն Վլադիմիրի Քոչարյան - 88,42 միավոր,**
8) **Լիզա Ռաֆիկի Գրիգորյան - 63,91 միավոր,**

9) Էդուարդ Աշոտի Մկրտչյան - 49,32 միավոր,

10) Վահե Միշայի Գրիգորյան - 84,70 միավոր,

11) Լիանա Օնիկի Հակոբյան - 71,65 միավոր,

12) Աննա Ռազմիկի Մարգարյան - 68,16 միավոր,

13) Դավիթ Լևոնի Հակոբյան - 81,17 միավոր,

14) Արտյոմ Աշոտի Գեղամյան - 70,31 միավոր:

Նկատի ունենալով, որ աշխատանքային ժամն ավարտվեց, Հանձնաժողովը միաձայն որոշեց օրակարգի 2-րդ հարցի քննարկումը հետաձգել և նշանակել 2015 թվականի մարտի 2-ին, ժամը 12.30-ին:

Նիստը վարողը հայտնեց, որ Հանձնաժողովի նիստը հայտարարում է ավարտված:

Նիստն ավարտվեց 2015 թվականի փետրվարի 27-ին ժամը 18.00-ին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ՝

Նիստը վարող՝ ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՄԵԼԻՔՅԱՆ

ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Արձանագրող՝ Միքայել Մինասյան